ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

15 հուլիսի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

102
(2768)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՂՍՐՏԵԼ Է ԱՐՑԱԽԻՑ

Երեկ Արցախում կազմակերպված համաժողովրդական ակցիան լուրջ դժգոհություն է առաջացրել իշխող ուժի մոտ: Նիկոլ Փաշինյանի թիմակիցները նեղսրտած են, որ Արցախից սկսել են քննադատել ու պահանջատիրություն ներկայացնել Հայաստանի իշխանության նկատմամբ: Առաջին անգամ հնչել է ոչ այնքան հասցեական, սակայն, այնուամենայնիվ, քննադատություն Արցախից Հայաստանի իշխանությունների հասցեին: Ընդդիմադիր ներկայացուցիչներն, իհարկե, դժգոհ են, որ անձամբ Նիկոլ Փաշինյանին Արայիկ Հարությունյանը չի քննադատում Արցախի այսօրվա վիճակի համար, բայց, մյուս կողմից, իշխանությունն է նեղսրտած, որ, այնուամենայնիվ, Արցախի Հանրապետության վարչապետը քննադատում է իրենց՝ ուղիղ ասելով, որ Արցախը մնացել է միայնակ, թողել են Ադրբեջանի կազմում եւ այլն:

Մի խոսքով, այս փուլում, երբ Արցախը շնչահեղձ է լինում, փոխանակ ջանքեր գործադրվեն այս վիճակից դուրս գալու համար, դեռեւս փորձ է արվում հարցը տեղափոխել ներքին գզվռտոցների դաշտ, մինչդեռ թշնամին միասնական ճակատով կռվում է հայկական երկու պետությունների դեմ:



Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Սիսակ Գաբրիելյանի գործերը լավ են: Նա 2021 թվականին անհատական բնակելի տուն է գնել Շիրակի մարզկենտրոն Գյումրի քաղաքում եւ հանդիսանում է այդ տան միանձնյա սեփականատերը: Նա տունը գնել է 2021 թվականի սեպտեմբերին: Բացի այս, ՔՊ-ական պատգամավորը հանդիսանում է Շենգավիթ վարչական շրջանում գտնվող բնակարանի համասեփականատեր: «Ժողովուրդ» օրաթերթը 2022 թվականի տարեկան հայտարարագրից տեղեկացավ, որ պատգամավորը 2021 թվականին նաեւ մեքենա է գնել՝ 2018 թվականի արտադրության Hyundai: Բայց այս ծախսերը, ըստ հայտարարագրի, Սիսակ Գաբրիելյանը կանխիկ դրամ չի ունեցել, սակայն բանկային հաշվին առկա նրա դրամական միջոցները կազմել են 237 հազար եւ 19 հազար դրամ: Մեկ տարվա ընթացքում Գաբրիելյանի եկամուտը կազմել է 16 մլն 776 հազար դրամ, որից 9 մլն 543 հազար դրամը նրա աշխատավարձն է եղել, իսկ 1 մլն 982 հազարը նա ստացել է Ֆինանսների նախարարությունից որպես եկամտահարկի վերադարձ: Բացի այդ, նա 1 մլն 250 հազար եւ 4 մլն դրամ է վերցրել բանկերից: Ընդհանուր առմամբ, 2022 թվականի վերջին նրա վարկերի մնացորդը կազմել է 22 մլն 853 հազար դրամ, իսկ մեկ տարվա ընթացքում էլ նա 6 մլն 500 հազար դրամ է ծախսել՝ վարկը մարելու համար: Հավելենք, որ պատգամավորի կինն աշխատում է Հանրային հեռուստաընկերությունում: Անի Բաղդասարյանը 2021 թվականին այգետնակ է գնել Ջրվեժում եւ հանդիսանում է միանձնյա սեփականատերը: Նա երեք մլն դրամի վարկ ունի եւ մեկ տարվա ընթացքում 15 մլն դրամ եկամուտ է ունեցել՝ աշխատավարձերից ու վարկերից: Մի խոսքով, 2021թ.-ին ամուսինները առանձին-առանձին տներ են գնել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ իշխանական թեւում լուրջ քննարկումներ են ընթանում Նիկոլ Փաշինյանի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի գործունեության ձախողման հարցով: Բանն այն է, որ հենց նրան էր վստահված բուհերի միավորման գործընթացն ու Ակադեմիական քաղաք ստեղծելու ծրագիրը, որը չի ստացվում: Ըստ մեր տեղեկությունների՝ Արայիկ Հարությունյանը պետք է ակտիվ գործեր, քանի որ դեռ նախորդ տարվանից պետք է հաստատվեր կոնցեպտը, սակայն այդպես էլ չի կատարվել: Դա է պատճառը, որ նրա հանդեպ դժգոհություններն ավելանում են, եւ այդ հարցը հասել է անգամ Փաշինյանին: Բացի այս, գործընթացին ներգրավվել է նաեւ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, որպեսզի նա հստակ պատասխանի եւ ներկայացնի, թե ինչ է արվել այս ընթացքում, եւ ինչ բացթողումներ կան: Ավելին՝ մեզ հասած տեղեկություններով՝ գերմանական ընկերություն են հրավիրել Հայաստան, որպեսզի նրանք զբաղվեն Ակադեմիական քաղաքի ստեղծման աշխատանքներով: Հավելենք, որ Արայիկ Հարությունյանը դեռ մայիսի 30-ին նշանակվել էր «Ակադեմիական քաղաք» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ եւ այդ օրվանից պետք է ակտիվ աշխատանքներ տաներ: Այն, որ արդեն Ժաննա Անդրեասյանն է կառավարում ամեն ինչ, ապացուցում է այն փաստը, որ հուլիսի 13-ին նիստ է եղել, որի ժամանակ էլ հիմնական զեկուցողը հենց Ժաննա Անդրեասյանն է եղել:

Հուլիսի 13-ին տեղի է ունեցել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախաձեռնող խմբի նիստ, որը վարել է վարչության նախագահ, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Նիստին մասնակցել են կուսակցության վարչության անդամներ, Երեւանի տարածքային կազմակերպությունների խորհուրդների անդամներ, Երեւանի ավագանու անդամներ: Քննարկվել են Երեւանի ավագանու սպասվող ընտրություններում կուսակցության ընտրական ցուցակի ձեւավորման կարգը եւ քարոզարշավին առնչվող հարցեր: ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ երեկ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախաձեռնող խմբի նիստը, որը վարել է վարչության նախագահ Նիկոլ Փաշինյանը, շատ թեժ է եղել: Մեր աղբյուրները փոխանցում են, որ գլխավոր թեման եղել է Երեւանի քաղաքապետի ընտրությունները: Բանն այն է, որ իշխանությունը պատրաստվում է ընտրությունների, իսկ կուսակցությունում գրեթե բոլորը գնում են անձակուրդ: Փաշինյանը նիստի ընթացքում ասել է, որ արդեն պետք է պատրաստվել, կազմել ցուցակները: Մեր տեղեկություններով՝ դեռեւս անուններ են շրջանառվում, թե ովքեր պետք է լինեն այդ ցուցակներում, բայց վերջնական հստակեցում չկա: Նախընտրական շտաբը ղեկավարելու է Արմեն Փամբուխյանը, բայց քննարկվել է նաեւ տեղակալների հարցը: Նաեւ հարցեր են հնչել քարոզարշավը սկսելու հետ կապված՝ երբ է նախատեսվում սկսել, ովքեր պետք է ներգրավված լինեն աշխատանքներին: Փաշինյանը պատասխանել է, որ բոլորը, առանց բացառությունների, պետք է ներգրավվեն այդ գործում: Նիստում գլխավոր դերում է եղել նաեւ Տիգրան Ավինյանը, որը նշել է, որ պետք է սկսել աշխատանքի բաշխում անել, եւ բոլորը պետք է իրենց թաղամասերում, վարչական շրջաններում ներգրավվածություն ունենան: Վերջինս նաեւ հավելել է, թե գիտի, որ շատ քիչ ժամանակ է մնացել, բայց գրեթե որեւէ աշխատանք իր սրտով արված չէ, եւ պետք է ամբողջ ներուժը դնել այս գործին եւ համախմբված աշխատել:

ԶՐՈՒՅՑ

Ի՞ՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ԱՐՑԱԽՈՒՄ

Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում տեղի է ունեցել համաժողովրդական շարժման հանրահավաք: Այս առնչությամբ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Արցախի խորհրդարանի «Արդարություն» խմբակցության ղեկավար Մեսրոպ Հակոբյանի հետ՝ պարզելու համար, թե ինչ է կատարվում այնտեղ:

-Ես չեմ կարող ասել, որովհետև ես ավելի շատ անուններ եմ լսում, քան գործողություններ եմ տեսնում: Ըստ իս՝ համաժողովրդական շարժման սահմանում հստակ բան է, որ եթե շարժում է տեղի ունենում, եւ այն համաժողովրդական է, պետք է ծրագիր ունենա, պետք է օրակարգ ունենա, պիտի ինչ-որ կարգ ու սցենար ունենա: Մասնակիցները պետք է տեղեկացված լինեն՝ ինչի համար են անում այդ ամենը կամ ինչ արդյունք են ակնկալում:

-Այսինքն՝ օրակարգ չկա՞:

-Ոչ , որովհետև երեկվանից փորձում ենք նախ դա ճշտել եւ ապա նշված մտահոգիչ այն հանգամանքը, որ Արցախի Հանրապետությունն ունի նախագահ, ռազմական դրության ժամանակ՝ գերագույն գլխավոր հրամանատար, որը մենք այդպես էլ չզգացինք, չտեսանք, եւ սա մտահոգություն է առաջացնում, եւ ինչ-որ անհասկանալի հայտարարությունները բացարձակ չընկալվող ու չընդունվող առ այն, որ սրանք քաղաքական պրոցեսներ չեն: Գիտեք ե՛ իմ, ե՛ւ շատ այլ անձանց համար սա շատ անլուրջ է, որովհետև բոլորս ենք գիտակցում, չէ՞, որ այն վիճակում, որում մենք ենք գտնվում, չի կարող բարվոք քաղաքականության արդյունք լինել: Եվ հիմա առանց քաղաքականություն վարելու ինչ-որ գործողություններ անելը, բնականաբար, չի կարող արդյունավետ լինել կամ ընդհանրապես որեւէ հետեւանք ունենալ: Դրա համար իրենք կարծես մթության մեջ որոշել են, թե ժողովրդին ինչ ուղղությամբ տանեն, ոնց տանեն. դա անում են, բայց ես վստահ եմ, որ ժողովրդի մեծ մասը կամ ընդհանրապես բոլորը տեղյակ չեն, թե ինչ նպատակ է այդ ամենը հետապնդում:

-Դուք մասնակցու՞մ եք նախաձեռնությանը:

-Բնականաբար, ակցիայի կոչին արձագանքել ենք ու եղել այնտեղ, որոհետև չես կարող զերծ մնալ, քանի որ դու ժողովրդի մասնիկ ես, բայց ակցիայի ժամանակ արտահայտած մտքերը մտահոգիչ էին, որ, ըստ էության, ներկայիս իշխանությունների նկատմամբ որեւէ պահանջ չկար: Կարծես միայն հայտարարություն էր, որ իշխանություններն այլեւս որեւէ դերակատարություն չունեն եւ ընդամենը խնդրում, աղաչում են անհասցե կամ միջազգային հարթակների փրկելու մեզ, որը, ամեն դեպքում, կարծում եմ՝ մեզ հարիր չէր: Մենք չտեսանք նաեւ, օրինակ, հստակ պահանջ հայաստանյան իշխանություններից, որ, ենթադրենք, վաղը Հայաստանի վարչապետը պետք է հանդիպում ունենա, այսինքն՝ բանակցային գործընթացի մասին է խոսքը: Հստակ նման մեսիջ չկար:

Տարօրինակ էր ամենը, ինչ տեղի էր ունենում, չնայած որ սրա անհրաժեշտությունը կար: Ժողովուրդն այլեւս չէր կարող նստել իրենց տներում:

Զրուցեց ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

«ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ»-Ը ՄԻԱՆՈՒՄ Է

««Ժառանգություն» կուսակցությունը՝ որպես հայ ժողովրդի հավատարիմ մասնիկ, որոշել է քաղաքացիական եւ կամավորական ամենօրյա գործունեությունից զատ, իր համար բացառիկ՝ կուսակցական-հրապարակային հայտարարությամբ ողջունել Արցախի Հանրապետության մայրաքաղաքում մեկնարկած համաժողովրդական շարժումը»,- հայտարարություն է տարածել «Ժառանգություն»-ը:

Հայտարարության մեջ նաեւ նշվում է. «Ժառանգությունը» ընդունում է շարժման էությունն ու բովանդակությունը, ժամանակի ընտրությունն ու ընթացակարգի հրամայականը եւ իր ողջ կարողականությունը՝ քաղաքական, դիվանագիտական, տեղեկատվական, վերլուծական եւ մարդկային, ի սպաս է դնում այսօր Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում բացված համազգային գործընթացին:

«Ժառանգությունը» միանում է»:

Նշենք, որ Արցախում երեկ՝ հուլիսի 14-ին, մեկնարկել է համաժողովրդական շարժումը. Ստեփանակերտի Վերածննդի հրպարակում հազարավոր արցախցիներ էին հավաքվել: Շարժման մեկնարկի մասին նախօրեին հայտարարել էր Արցախի պետնախարար Գուրգեն Ներսիսյանը: Հանրահավաքին մասնակցում էր նաեւ Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը:

Ավելի ուշ Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը հանդես էր եկել տեսաուղերձով եւ հայտարարել, որ միանում է շարժմանը:

Հանրահավաքի մասնակիցները երթով գնացել են ԿԽՄԿ գրասենյակ եւ ռուս խաղաղապահների նստավայր: Շարժման նպատակն է հասնել Լաչինի միջանցքի ապաշրջափակմանը:

ՈՐՆ Է ԱՐՑԱԽԻ ԽՆԴԻՐԸ

Արդեն մեկ ամիս է, որ, բառիս բուն իմաստով, Արցախը ուղղություն է վերցրել դեպի խորը ճգնաժամ, որը ոչ միայն ունի ընդգծված քաղաքական բնույթ, այլեւ Արցախում սովամահության տանելու գործընթաց է. այս մասին հուլիսի 14-ի՝ Երեւանում ԵՄ գրասենյակի դիմաց ՀՀԿ-ականների կողմից կազմակերպված բողոքի ակցիայի ժամանակ հայտարարեց ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանը:

«Ժամանակը, պատմությունը ցույց է տվել, որ Արցախը որեւէ պայմաններում ադրբեջանցիների հետ մեկ ընդհանուր պետության կազմում ապրելու հնարավորություն չունի:

Ստեղծվել է իրավիճակ, երբ Ադրբեջանը հայտարարում է, թե, իբր, արցախցիներն իր քաղաքացիներն են, բայց այդ նույն Ադրբեջանն էթնիկ զտումների եւ արցախցիներին սովամահ անելու քաղաքականություն է վարում: Երբ մենք գալիս ենք կոչերով եւ հորդորներով դիմելու միջազգային տարբեր ներկայացուցչություններին, դա դեռ չի նշանակում, որ մենք չենք գիտակցում, որ այս իրավիճակի գլխավոր պատասխանատուն եւ գլխավոր սպառնալիքը հայաստանյան իշխանությունն է, այդ պռոբլեմն ունի կոնկրետ անուն. դա Նիկոլ Փաշինյանն է», - հայտարարեց Տիգրան Աբրահամյանը:

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ՉԿԱ

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մամուլի խոսնակ Սեդա Ղուկասյանը հայտնեց, որ Երեւանի ավագանու ընտրությունների համար հստակ հաստատված ժամանակացույց դեռ չկա: Ըստ նախնական եւ ոչ հաստատված տեղեկության՝ ավագանու ընտրությունների քարոզարշավը կմեկնարկի օգոստոսի 23-ին եւ կտեւի մինչեւ սեպտեմբերի 15-ը: Կանխատեսվում է նաեւ երեքշաբթի ԿԸՀ նիստ գումարել եւ հաստատել ավագանու ընտրությունների ժամանակացույցը:

«Մենք երեւի այսօր կստանանք կառավարության համապատասխան որոշումը: Որոշումը ստանալուց հետո, ամենայն հավանականությամբ, երեքշաբթի կկայանա նիստ, որից հետո կհաստատվի ընտրությունների ժամանակացույցը»,- ասաց Ղուկասյանը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԳՈՐԾԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ Է

ՀՀ քննչական կոմիտեն նախաքննության ավարտ է հայտարարել ՋՈՒ հետախուզության նախկին պետ Արայիկ Հարությունյանի գործով եւ գործն ուղարկել է դատարան: Նշենք, որ գեներալ-մայորն արդեն 7 ամիս է, ինչ կալանքի տակ է:

Դատախազությունը հայտնել էր, որ ՀՀ ՊՆ N զորամասի հրամանատար Ա.Հ.-ն, ունենալով մարտական հերթապահության վերաբերյալ ժամանակին որոշումներ ընդունելու, ենթականերին առաջադրանքներ տալու եւ դրանց կատարումը վերահսկելու, պետական սահմանի, շփման գծի խախտումները կանխելու, ինչպես նաեւ հակառակորդի հանկարծակի հարձակման հնարավորությունը բացառելու եւ կասեցնելու պարտավորություն, 2021 թվականի ապրիլի 15-ին, տեղեկանալով, որ իր կողմից դեռեւս 2021 թվականի ապրիլի 5-ին արձակված հրամանի պահանջները չեն կատարվել, որեւէ միջոց չի ձեռնարկել հրամանի պահանջների կատարումն ապահովելու ուղղությամբ:

Արդյունքում ՀՀ զինված ուժերը զրկվել են Հայաստանի Հանրապետության վրա անակնկալ հարձակումը ժամանակին հայտնաբերելու եւ դրան դիմակայելու հնարավորությունից՝ առաջացնելով ծանր հետեւանք. 2021 թվականի մայիսի 12-ին Ադրբեջանի զինված ուժերի ստորաբաժանումները ՀՀ պետական սահմանի Գեղարքունիքի մարզի Վերին Շորժա, Կութ բնակավայրերին եւ Նորաբակ համայնքին հարող շփման գծի այն հատվածներով, որտեղ զորամասի հրամանատարի անգործության հետեւանքով սահմանված չի եղել մարտական հերթապահություն, անարգել հատել եւ մխրճվել են ՀՀ պետական սահմանից ներս, տեղակայել մարտական դիրքեր՝ վերահսկողություն սահմանելով ՀՀ սուվերեն տարածքի նկատմամբ:

Հսկող դատախազի որոշմամբ՝2022 թվականի դեկտեմբերի 13-ին Ա.Հ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով (մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում):

Հետաքրքիր է, որ ադրբեջանական ՋՈՒ հարձակումը չկանխելուց հետո Արայիկ Հարությունյանը նույնիսկ պաշտոնի բարձրացում է ստացել՝կարճ ժամանակով նշանակվելով հետախուզության վարչության պետ, սակայն հետո նրան ազատեցին այդ պաշտոնից: Իսկ ավելի վաղ՝2020 թվականի հոկտեմբերին՝ 44-օրյա պատերազմի օրերին, վարչապետ Փաշինյանի միջնորդությամբ՝ՀՀ ՋՈՒ 2-րդ բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Արայիկ Հարությունյանին, ի թիվս մի քանի այլ բարձրաստիճան զինվորականների, շնորհվել է գեներալ-մայորի կոչում: Հիմա նա կալանավորված է, իսկ գործը՝ դատարանում: Այսինքն՝ պետությունը չունի հստակ դիրքորոշում այս սպայի նկատմամբ. մեկ պարգեւատրում է, մեկ մեղադրում:

ՀԵՏԱՊՆԴՈՒՄ՝ ԱՇՈՏՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Արմեն Աշոտյանի նկատմամբ քաղաքական հետապնդումն անմիջականորեն իրականացնում է Արգիշտի Քարամյանը. այս մասին Facebook-ի իր էջում գրել է ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանի փաստաբան Տիգրան Աթանեսյանը:

Նա, մասնավորապես, նշել է. «Ինչպես գրել էի մի քանի օր առաջ, քաղաքական բանտարկյալ Արմեն Աշոտյանի կալանքի որոշման դեմ վերաքննիչ բողոքը քննվելու է ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Արթուր Նահապետյանի կողմից:

Արմեն Աշոտյանի նկատմամբ քաղաքական հետապնդումը իրականացնում է երկրի ղեկավարի ղեկին հայտնված մի կենդանի, ում անունը իմ էջում որոշել եմ էլ երբեք չգրել՝ առնվազն հիգիենայի նկատառումներից ելնելով:

Քաղաքական հետապնդումը անմիջականորեն իրականացնում է Ա.Քարամյանը, ում մտերիմ ընկերը եւ սանիկն է հանդիսանում նշված դատավորը:

Այդ հիմնավորմամբ այսօր բացարկ եմ ներկայացրել դատավորին:

Իհարկե, միամտություն չունեմ մտածելու, որ բացարկը դատավորի կողմից կընդունվի, կամ վերաքննիչ բողոքը կարող է բավարարվել:

Արմեն Աշոտյանի ազատության գրավականը նրա եւ նրան աջակցող մարդկանց անզիջում պայքարն է, որը կստիպի հակահիգիենիկ կենդանուն ազատել Արմենին եւ հեռանալ երկրի ղեկավարի ղեկից»:

9 ՊԱՏԳԱՄԱՎՈՐ՝ ԻՐԿՈՒՏՍԿՈՒՄ

Հայ-ռուսական համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովի 37-րդ նիստը տեղի կունենա հաջորդ շաբաթ Իրկուտսկում: Այս մասին նշված է ԱԺ նախագահի համապատասխան կարգադրության մեջ:

«Հուլիսի 19-22-ը Իրկուտսկ կգործուղվի Ազգային ժողովի փոխխոսնակ Հակոբ Արշակյանի գլխավորած պատվիրակությունը՝ մասնակցելու Հայաստանի Ազգային ժողովի եւ ՌԴ Դաշնային ժողովի միջեւ համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովի 37-րդ նիստին»,- նշված է հաղորդագրության մեջ:

ԱԺ մամուլի ծառայությունից հայտնում են, որ, բացի փոխխոսնակից, պատվիրակության կազմում են ութ պատգամավորներ, այդ թվում՝ ընդդիմադիր «Հայաստան» խմբակցությունից:

Արշակյանը հայկական կողմից միջխորհրդարանական հանձնաժողովի համանախագահն է:

Մասնավորապես, պատվիրակության կազմում են ՔՊ-ից Վլադիմիր Վարդանյանը, Վահե Ղալումյանը, Բաբկեն Թունյանը, Վաղարշակ Հակոբյանը, Ալեքսեյ Սանդիկովը, Միքայել Թումասյանը, Շիրակ Թորոսյանը, «Հայաստան» խմբակցությունից Գեղամ Մանուկյանը:

ԱԿՑԻԱ

ԱՀԱՋԱՆԳՈՒՄ ԵՆ ԱՐՑԱԽԻՑ

«Արցախի՝ 7 ամիս շարունակվող ամբողջական շրջափակումը հասել է օրհասական կետի, երբ այլեւս լրջագույնս վտանգված է 120 հազար մարդու, այդ թվում՝ 30 հազար երեխաների, 20 հազար տարեցների կյանքը»,- հուլիսի 14-ին Ստեփանակերտում համաժողովրդական շարժման հանրահավաքում հայտարարեց Արցախի ՄԻՊ Գեղամ Ստեփանյանը:

«Երբ այլեւս մի ողջ ժողովրդի գլխին կախված է գոյաբանական սպառնալիքներ, որոնք անհերքելի են եւ ընդգծված: Գտնվելով շրջափակման մեջ եւ հունիսի 15-ից ամբողջությամբ կտրվելով հումանիտար հասանելիությունից՝ մեր ժողովուրդը կանգնել է թերսնուցման, սովի, Ադրբեջանի կողմից անթաքույց իրականացվող էթնիկ զտման, բռնի հպատակեցման եւ ցեղասպանության իրականացման անհերքելի սպառնալիքի ներքո:

Այսօր ահազանգի կոչնակը հնչեցնելու հերթական պահն է: Դիմում եմ միջազգային հանրության բոլոր դերակատարներին: Մարդու իրավունքնե՞ր, ասում եք. ուրեմն ասեք ինձ՝ ես ինչպես նայեմ այս ժողովրդի աչքերին եւ ասեմ, որ իրենք էլ ունեն իրավունքներ: Ես ինչպե՞ս նայեմ թերսնուցման մեջ գտնվողն հղի կնոջ աչքերին, որի երեխան կարող է արատներով ծնվել: Ես ինչպե՞ս նայեմ այն մայրերի աչքերին, որոնց օրվա ամենամեծ երազանքը իրենց երեխայի համար մի բուռ միրգ կամ քաղցրավենիք հայթայթելն է:

Ես ինչպե՞ս նայեմ հերթերում կանգնած հազարավոր մարդկանց աչքերին, որոնք ժամերով հերթ են կանգնում մի բուռ շաքարավազ կամ ձեթ ստանալու համար: Եվ, վերջապես, ես ինչպե՞ս նայեմ այս հոդակտորի համար իր ամենաթանկը տված, զոհված մոր աչքերին, որը ահաբեկված աչքերով նայում է ինձ՝ վախենալով, որ կկորցնի իրեն մնացած վերջին սրբությունը՝ որդու գերեզմանը:

Ես ուզում եմ, որ դուք նայեք նրանց աչքերին, դուք պատասխանեք նրանց, որովհետեւ ես այլեւս պատասխաններ չեմ գտնում:

Գեղեցիկ ու շքեղ դահլիճներում մարդու իրավունքներից խոսելը մի բան է, այդ իրավունքների պաշտպանությունը գործնական քայլերով ապացուցելը՝ մեկ այլ բան:

Մտահոգված ենք, խիստ մտահոգված ենք, խորապես մտահոգված ենք, կոչ ենք անում եւ նմանատիպ այլ հայտարարություններ:

Բավ է, հերիք է: Մինչ դուք մերկապարանոց մտահոգություններ եք հայտնում, 120 հազար մարդ մատնվում է անմարդկային զրկանքների»,-ասաց Գեղամ Ստեփանյանը: Նա նաեւ դիմեց ռուս խաղաղապահներին, որոնց 2020 թվականի եռակողմ հայտարարությամբ վերապահվել է Արցախի ժողովրդի կյանքի իրավունքի եւ ֆիզիկական գոյության հիմնական երաշխավորի դերը. «Մեզ խաղաղություն էր խոստացվել: Խաղաղությունը ամեն օր տեղեկագրերում հրադադարի ռեժիմի խախտումների արձանագրումը չէ: Խաղաղությունը ամենօրյա հաց հայթայթելով ֆիզիկական գոյություն քարշ տալը չէ, խաղաղությունը սեփական հայրենիքում պատանդառված եւ ամեն ինչից զրկված լինելը չէ: Խաղաղությունն ամեն օր հոգեբանական հարձակումների եւ մեզ վրա թափվող անորոշությունները չեն:

Տե՛ր կանգնեք ձեր մանդատին՝ ապահովելու իրական խաղաղություն, ապահովելու բարեկեցիկ կյանք, որ խոստացել եք մեր ժողովրդին ամենաբարձր մակարդակով»:

Նա դիմեց նաեւ Հայաստանի ժողովրդին՝ եւս մեկ անգամ Արցախին ի պաշտպանություն լինելու, մենակ չթողնելու Արցախում ապրող հային իր սրբագույն երազանքի հետ մեն-միայնակ:

Վարդանյանը կոչ է արել Սփյուռքում ապրող համերկրացիներին հիշել իրենց անցյալը, քանի որ շատերը իրենց նախնիների օրինակով գիտեն, թե ինչ է նշանակում ցեղասպանվել, հայրենազրկվել, ինչ է նշանակում ապրել հայրենիքից հեռու, հայրենիքի կարոտը սրտում անթեղած, եւ պետք է վեր կենալ՝ կանխելու հայ ժողովրդի նոր ցեղասպանությունը, պարտադրելու աշխարհին գոնե այս անգամ պատասխանատվություն ստանձնել հայի ճակատագրի համար:

«Մենք չենք կարող լինել Ադրբեջանի կազմում եւ վերջ: Վերջապես հասկացե՛ք: Բոլոր նրանք, որոնք դեռ իլյուզիաներ ունեն այս առիթով, թող պատասխանեն՝ արդյոք հնարավո՞ր էր պատկերացնել հրեաներին կյանքը նացիստական Գերմանիայում: Այո, Ադրբեջանն այդ նույն նացիստական երկիրն է, որտեղ հասարակությունն ամբողջությամբ ներծծված է հայատյացությամբ»:

Նշենք, որ Արցախում երեկ՝ հուլիսի 14-ին, մեկնարկել է համաժողովրդական շարժումը. Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում հազարավոր արցախցիներ են հավաքվել: Շարժման մեկնարկի մասին նախօրեին հայտարարել էր Արցախի պետնախարար Գուրգեն Ներսիսյանը: Հանրահավաքին մասնակցում է նաեւ Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը:

Ավելի ուշ Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը հանդես էր եկել տեսաուղերձով եւ հայտարարել, որ միանում է շարժմանը:

Շարժման նպատակն է հասնել Լաչինի միջանցքի ապաշրջափակմանը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ՝ ՆՅՈՒ–ՅՈՐՔ

Ազգային ժողովի ՔՊ-ական պատգամավորներ Ծովինար Վարդանյանն ու Հասմիկ Հակոբյանը հուլիսի 17-20-ին գործուղվում են ԱՄՆ՝Նյու Յորք:

ԱԺ նախագահի համապատասխան կարգադրության մեջ նշվում է, որ նրանք Նյու Յուրքում մասնակցելու են կայուն զարգացմանը նվիրված խորհրդարանական ֆորումին:

Ի՞ՆՉ ԵՆ ՔՆՆԱՐԿԵԼ

Հուլիսի 13-ին տեղի է ունեցել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախաձեռնող խմբի նիստ, որը վարել է վարչության նախագահ, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Նիստին մասնակցել են կուսակցության վարչության անդամներ, Երեւանի տարածքային կազմակերպությունների խորհուրդների անդամներ, Երեւանի ավագանու անդամներ:

Քննարկվել են Երեւանի ավագանու սպասվող ընտրություններում կուսակցության ընտրական ցուցակի ձեւավորման կարգը եւ քարոզարշավին առնչվող հարցեր:

ՀԱՆԴԻՊԵԼ Է ԼԵՀԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Ազգային ժողովի նախագահի տեղակալ Ռուբեն Ռուբինյանը հուլիսի 14-ին ընդունել է Հայաստանում Լեհաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Պյոտր Սկվեչինսկիին: Հանդիպմանը մասնակցել է նաեւ Հայաստան-Լեհաստան բարեկամական խմբի ղեկավար Արուսյակ Ջուլհակյանը:

Ռուբեն Ռուբինյանը, ողջունելով դեսպանին խորհրդարանում, նշել է, որ Հայաստանը կարեւորում է Լեհաստանի հետ հարաբերությունների, համագործակցության զարգացումը:

Պյոտր Սկվեչինսկին, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, վստահեցրել է, որ իր պաշտոնավարման ընթացքում կանի հնարավորը՝ նպաստելու երկու երկրների միջեւ կապերի առավել զարգացմանն ու խորացմանը: Նա կարեւորել է խորհրդարանական դիվանագիտության դերը երկկողմ կապերի ամրապնդման հարցում:

Դեսպանի խնդրանքով՝ Ռուբեն Ռուբինյանը ներկայացրել է տարածաշրջանային անվտանգության խնդիրները, Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակը, խոսել Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակման հետեւանքով առաջացած հումանիտար ճգնաժամի մասին: Անդրադարձ է կատարվել Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին: Հանդիպման ընթացքում մտքեր են փոխանակվել երկու երկրների համար հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համագործակցության հնարավորությունների շուրջ:

ԻՐԱՎԱԿԱՆ

1 ՏԱՐԻ ԱՆՑ

«ՍՈՒՐՄԱԼՈՒ»-Ի ՊԱՅԹՅՈՒՆՆ ՈՒ 71-ԱՄՅԱ ՊԱՊԻԿԸ

2022 թվականի օգոստոսի 7-ին՝ «Սուրմալու» առեւտրի կենտրոնի ոլայթյունից 1 շաբաթ առաջ, Արտավազդ Հայրապետյանը հարազատների հետ տոնել է 71-ամյակը: Հարազատները մեծ բեֆ էին կազմակերպել, սակայն ուրախությունը կարճ տեւեց. օգոստոսի 14-ին՝ «Սուրմալու» առեւտրի կենտրոնի ոլայթյունից ժամեր անց, 71-ամյա Արտավազդ Հայրապետյանին հարազատները գտան այրված: Արկադի Հայրապետյանն իր հայրիկի՝ Արտավազդ Հայրապետյանի հետ «Սուրմալու» առեւտրի կենտրոնում փոքրիկ տնտեսական խանութ ուներ, ու հայրն էր առեւտրի կենտրոնում վաճառքով զբաղվում:

Մահացած Արտավազդ Հայրապետյանի որդի Արկադի Հայրապետյանի խոսքով՝ Ազգային անվտանգության ծառայությունն իրեն չեն հրավիրել հարցաքննության, ինքն անձամբ վեր է կացել ու գնացել նախաքննական մարմին՝ ասելով, որ եկել է ու կարեւոր բան ունի հայտնելու. «Գնացել եմ անձամբ ԱԱԾ ու ասել եմ՝ ինչ գիտեմ, ձեզ կհայտնեմ: Հիմա ձեզ չեմ կարող մանրամասներ ներկայացնել, ԱԱԾ քննիչն ինձ ասել է՝ ամեն ինչ կքննեն: Ես կարծում եմ, որ գործը կոծկում են, շահագրգիռ մարդիկ կան»:

Հիշեցնենք, որ 2021թ. ապրիլի 6-ին «Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցավ հրդեհ, եւ այս դեպքից մեկ տարի անց՝ 2022 թվականի օգոստոսի 14-ին, նույն առեւտրի կենտրոնում տեղի ունեցավ պայթուն: Այս երկու քրեական գործերը միացվել են իրար, ու նախաքննական մարմինը հայտնեց, որ 2023թ. փետրվարի 22-ին «Երեւանի պահածոների գործարան» ՓԲԸ-ի տնօրենը կալանավորվել է:

Նշված վարույթի շրջանակում մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունի 5 անձ՝ «Երեւանի պահածոների գործարան» ՓԲԸ-ի տնօրենը, փոխտնօրենը եւ 3 տնտեսվարողները, որոնց պահեստային տարածքում առաջացել է պայթյունը: Այս պահին, սակայն, արգելանքի տակ է գտնվում մեկ անձ. «խոշոր ձկները» մինչ օրս պատասխանատվության չեն ենթարկվել: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ նախաքննական մարմինը հարցաքննել էր Երեւանի «Սուրմալու» առեւտրի կենտրոնի սեփականատեր Ռազմիկ Զախարյանին, սակայն նրա պատասխանատվության հարցը իրավապահներն այդպես էլ մեկ տարի անց չկարողացան առաջ քաշել:

Ողբերգական պայթյունը խլեց 17 հոգու կյանք, որոնցից մեկին փրկարարները այդպես էլ չգտան, ու հարազատները պայթյունի վայրից իրենց հարազատի ենթադրյալ մոխիրը հուղարկավորեցին: Իսկ, ահա, գործն էլ մոտ մեկ ամիս առաջ իրավապահները որոշել են ՀՀ քննչական կոմիտեի ձեռքից վերցնել եւ ուղարկել Ազգային անվտանգության ծառայություն. արդյոք ԱԱԾ-ն պատասխանատվության կկանչի՞ խոշոր ձկներին: «Ժողովուրդ» օրաթերթը հետեւում է քննության ընթացքին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԴԱՏԱԿԱՆ

ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ՝ ⇨ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դիմումի հիման վրա՝ Հակակոռուպցիոն դատարանի 2023 թվականի հուլիսի 13-ի որոշմամբ՝ հայցի նախնական ապահովման միջոցներ են կիրառվել ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի եւ նրան փոխկապակցված յոթ անձի (ընտանիքի անդամներ՝ կին, զավակներ, նրանց ամուսիններ) գույքերի նկատմամբ:

Ուսումնասիրության նախնական արդյունքներով՝ ապօրինի են դիտվել եւ ենթակա են բռնագանձման՝

- 20 միավոր անշարժ գույք՝ առավելապես Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում գտնվող շենքերում,
- 2 տրանսպորտային միջոց,
- մասնակցություն՝ հայաստանյան եւ արտասահմանյան 18 իրավաբանական անձերում,
- ավելի քան 1.5 միլիոն ԱՄՆ դոլարի ավանդներ եւ արժեթղթեր,
- շուրջ 10 միլիարդ դրամի ֆիզիկական եւ իրավաբանական անձանց տրամադրված փոխառություններ,



- շուրջ 22 միլիարդ դրամ, որն իրենից ներկայացնում է ապօրինի ծագում ունեցող դրամական միջոցների մնացորդի, բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված միջոցների եւ այլ ծախսված միջոցների հանրագումար, որը չի նույնականացվել:

ԱԶԱՏՈՒՄ՝ ՊԱՇՏՈՆԻՑ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի որոշմամբ՝ 2023 թվականի հունիսի 7-ին Արմավիրի եւ Կոտայքի մարզերի դատախազություններում ինքնավար պաշտոն զբաղեցնող երկու անձի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Կարգապահական վարույթի ընթացքում պարզվել է, որ դատախազները դրսեւորել են դատախազի հեղինակությունը, բարի համբավը, պատիվը եւ արժանապատվությունը արատավորող, դատախազի բարձր հեղինակությանը ոչ հարիր վարքագիծ:

Կարգապահական վարույթի արդյունքները 2023 թվականի հուլիսի 10-ին ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողով:

Էթիկայի հանձնաժողովը 2023 թվականի հուլիսի 12-ի որոշմամբ՝ հաստատված է համարել կարգապահական խախտումների առկայությունը, դրանցում Արմավիրի եւ Կոտայքի մարզերի դատախազությունների երկու դատախազի մեղավորությունը եւ դրական եզրակացություն է տվել վերջիններիս նկատմամբ «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ նշանակելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի միջնորդությանը:

Գլխավոր դատախազի 2023 թվականի հուլիսի 14-ի հրամաններով՝ Կոտայքի եւ Արմավիրի դատախազության երկու դատախազներն ազատվել են պաշտոնից:

ՁԵՐԲԱԿԱԼԵՑԻՆ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ՎԻՏԱԼԻ ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻՑ



ԱՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն, սեփականության, տնտեսական գործունեության եւ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների գործերով բաժնում քննարկվել է ԱՀ գյուղի եւ գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի կողմից գլխավոր դատախազություն ներկայացված հաղորդումը, որով պարզվել է, որ ԱՀ գյուղի եւ գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 14.06.2021թ. որոշմամբ՝ Ասկերան քաղաքի բնակիչ Ա. Բ.-ին նպատակային փոխառության պայմանագրով տրամադրվել է 74.500.000 /յոթանասունչորս միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ փոխառություն՝ մեղվաընտանիքներ ձեռք բերելու նպատակով, սակայն փոխառու Ա..Բ.-ի կողմից նպատակային փոխառության պայմանագրով տրամադրված գումարը օգտագործվել է ոչ նպատակային, դրանք չեն ուղղվել պայմանագրի պարտադիր պայման հանդիսացող մեղվաընտանիքների ձեռք բերմանը, ինչի հետեւանքով պետությանը պատճառվել է խոշոր վնաս: Այս մասին հայտնում է Արցախի Հանրապետության գլխավոր դատախազությունը՝ անդրադառնալով Արցախի հերոս Վիտալի Բալասանյանի որդու մեղադրանքին:

Նկատի ունենալով, որ նյութերում առերեւույթ առկա են ԱՀ քրեական օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասով /Վարկը ոչ նպատակային օգտագործելը/ նախատեսված հանցագործության հատկանիշներ, 12.07.2023թ. հարուցվել է քրեական գործ:

Գործի մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողությունը եւ դատավարական ղեկավարումն իրականացնում է ԱՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն, սեփականության, տնտեսական գործունեության եւ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների գործերով բաժինը:

Հիշեցնենք, որ հուլիսի 13-ին Արցախում ձերբակալել էին Վիտալի Բալասանյանին, նրա որդուն եւ քեռորդուն: Ըստ տեղեկությունների՝ գեներալին ձերբակալել են Ասկերանի իր տանը: Մինչ այդ 40 րոպե խուզարկություն են իրականացրել Բալասանյանի տանը:

Նշենք նաեւ, որ 2023թ.-ի փետրվարի 14-ին հայտնի դարձավ, որ Արցախում քրեական գործ է հարուցվել Արցախի անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Վիտալի Բալասանյանի դեմ: Քրեական գործն առնչվում է Բալասանյանի պաշտոնավարման ժամանակահատվածում արձանագրված չարաշահումներին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 13-ից 14-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 80 դեպք, որոնցից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐՔ

ԲՈՂՈՔ՝ ՏՆՕՐԵՆԻՑ ՈՒ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻՑ

Դիլիջան խոշոր համայնքի Հաղարծին գյուղի 8-րդ փողոցի 3-րդ նրբանցքի բնակչուհի, բարձրագույն կրթությամբ Ասպրամ Հարությունյանը շնորհակալություն է հայտնել Դիլիջան խոշոր համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանին, ում շնորհիվ լուծվեց այդ թաղամասի կոյուղատարի ջրահեռացման խողովակաշարի կառուցման խնդիրը, որը բազում տարիներ՝ Դիլիջանի նախորդ համայնքապետերի պաշտոնավարման օրոք, չէր լուծվում: Սակայն բնակուհին դժգոհ է Դիլիջան համայնքի աղբահանությունն իրականացնող հիմնարկության տնօրեն Անուշավան Փիլոյանից: Ասպրամ Հարությունյանը բողոքում է, որ աղբարկղը տեղադրել են հենց իր տան դարպասի առաջ՝ ասելով, որ մի քանի հաղարծնեցիներ այդպես են ցանկանում, այդպես այդ բնակիչներին հարմար է: Ասպրամ Հարությունյանն ասում է, որ մի քանի բնակիչների ցանկությունը չի կարող իրականացվել՝ իր իրավունքի խախտման հաշվին, որ գոյություն ունի ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25 որոշումը, որով հստակ կանոնակարգված է, որ աղբահանություն իրականացնող ցանկացած կազմակերպություն պարտավոր է պահպանել աղբարկղի տեղադրման՝ բնակելի տնից որոշակի հեռավորության վրա գտնվելու վերաբերյալ օրենքով սահմանված նորմերը:

Ասպրամ Հարությունյանն այս խնդրի կապակցությամբ արդեն բողոքել է Տավուշի մարզպետարան, մտադիր է բողոքել ոստիկանություն, նաեւ՝ Առողջապահության եւ աշխատանքի տեսչական մարմի հյուսիսային տարածքային կենտրոնի պետին: Ա. Հարությունյանը փաստարկված դժգոհություններ ունի նաեւ ոստիկանության Դիլիջանի բաժնի պետ, ոստիկանության կապիտան Եփրեմ Գալստյանից, որին նա մեղադրում է օրենքը խտրական, կամայական ձեւով կիրառելու համար:

Ըստ բնակչուհու՝ Եփրեմ Գալստյանը Դիլիջան համայնքի Թեղուտ գյուղի փեսա է, Դիլիջանի ոստիկանապետի շատ գործողություններ կամ ծառայողական անգործությունը պայմանավորված են այդ հանգամանքով: Ասպրամի խոսքերով՝ ոստիկանության Դիլիջանի բաժնի աշխատողները չնախատեսված վայրերում ծխողներին տուգանում են, իսկ երբ առաջին խմբի հաշմանդամի բաժանորդային հաշվիչից նրա հարեւանը էլեկտրական հոսանք է գողացել, երբ ապօրինի անտառահատողը հատուկ պահպանվող տարածք հանդիսացող Դիլիջանի ազգային պարկի տարածքից մոտ մեկ մետր տրամագծով թաց կանգուն ծառեր է հատել, տեղափոխել իր տան բակ, դիլիջանցի ոստիկանները, այս ամենը տեսնելով, միջոցներ չեն ձեռնարկել ակնհայտ ապօրինությունների դեմ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Մեկնարկել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության «Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագրի 2023 թ.» փուլը: Հուլիսի 3-ից 18 երկրի 60 սփյուռքահայ ուսուցիչ վերապատրաստվում է 7 տարբեր ծրագրերով՝ «Ուսուցում մանկապարտեզում», «Ուսուցում մեկօրյա դպրոցում», «Տարրական ուսուցում», «Հայոց լեզվի եւ գրականության դասավանդում», «Հայոց պատմություն եւ մշակույթի պատմություն», «Պարարվեստ», «Տնօրենների վերապատրաստում»:

«Ծրագրի հիմնական խնդիրը կրթադաստիարակչական եւ մանկավարժական մեթոդների միասնական մոտեցում ունենալն ու սփյուռքին մեկ աղբյուրից սնելն է: Մեր նպատակն է Հայաստանում ձեռք բերված մանկավարժական գիտելիքը, մեթոդիկան, կիրառելի գործիքները փոխանցել նաեւ սփյուռքում աշխատող մեր գործընկերներին»,- նշել է ԿԳՄՍՆ արտաքին կապերի եւ սփյուռքի վարչության սփյուռքի հետ կապերի բաժնի պետ Կարեն Մնացականյանը:

Վերապատրաստման ծրագրին այս տարի դիմել է 167 ուսուցիչ, որոնցից ընտրվել է 60-ը՝ տարբեր սկզբունքներով: Կարեն Մնացականյանի տեղեկացմամբ՝ ամենաշատ դիմողներ եղել են Ռուսաստանի Դաշնությունից՝ պայմանավորված հայ համայնքի մեծությամբ. «Շուրջ 60 հոգի դիմել է միայն Ռուսաստանից: Այս տարի մեզ զարմացրեց Հնդկաստանի հայ համայնքը, որը թեեւ փոքր է, բայց մեծ հետաքրքրության եւ ակտիվ գործունեության արդյունքում եւս դիմել է ծրագրին եւ ընտրվել»:

Դիմողների ընտրության սկզբունքներից են մասնագիտական աշխատանքային փորձի առկայությունը, ինչպես նաեւ ԿԳՄՍՆ վերապատրաստման ծրագրերում վերջին 3 տարի ընդգրկված չլինելու հանգամանքը:

Մասնագիտությամբ շինարար-ինժեներ, տեխնիկական գիտությունների թեկնածու Արմեն Պողոսյանն էլ եկել է Ամերիկայի Միացյալ Նահանգների Ջորջա նահանգի Ատլանտա քաղաքից՝ մասնակցելու ծրագրի «Տնօրենների վերապատրաստում» դասընթացին՝ որպես հայկական մեկօրյա դպրոցի տնօրեն: «Դպրոցը ստեղծվել է 2021 թ. սեպտեմբերի 12-ին: Այս պահին դասավանդում ենք հայոց լեզու՝ գրել, կարդալ, պատմություն եւ երգ: Պլանավորում ենք ավելացնել նաեւ պարը»,- ասում է Ատլանտայի հայկական դպրոցի տնօրենը: Դպրոց այս պահին հաճախում է 4-14 տարեկան 25 աշակերտ՝ 3-խմբով, որոնց դասավանդում է 4 ուսուցիչ: Համայնքը փոքր է, բայց զարգացող, եւ հույս ունենք՝ թիվը կմեծանա»,- ասում է Արմեն Պողոսյանը:

Փաստելով, որ ոչ միայն ծնողները, այլեւ հենց երեխաներն են շահագրգռված հաճախել դպրոց՝ նա հիշում է. «Կային երեխաներ, որոնք այլեւս չէին գալու դպրոց, որովհետեւ ծնողը ծանրաբեռնված էր եւ չէր հասցնում: Այդուհանդերձ, երեխանները պարտադրեցին ծնողներին չընդհատել իրենց ուսումը եւ շարունակեցին հաճախել դպրոց»: Ատլանտայի հայկական մեկօրյա դպրոցում տարվա ընթացքում առնվազն 2 միջոցառում է կազմակերպվում, որին հրավիրվում եւ մասնակցում են նաեւ դպրոց չհաճախող հայ երեխաները, ինչը ոգեւորում է նրանց՝ սովորելու հայերեն: Վերապատրաստման նպատակով Հայաստան է ժամանել ոչ միայն տնօրենը, այլեւ ուսուցիչներից մեկը «Ուսուցում մեկօրյա դպրոցում» դասընթացին մասնակցելու նպատակով:

Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագրի շրջանակում, բացի բուն դասընթացներից, մանկավարժների համար կազմակերպվում են այցեր պատմամշակութային վայրեր եւ մշակութային օջախներ:

Նշենք, որ վերապատրաստման ծրագիրը կտեւի մինչեւ հուլիսի 28-ը:

ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ՈՌՈԳՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳ

Երեւանում 2023 թվականին 40 կմ ոռոգման նոր ցանց կանցկացվի: Շուրջ 24 կմ-ն արդեն պատրաստ է: Այս մասին «ժողովուրդ» օրաթերթին հայտնում են Երեւանի քաղաքապետարանից:

«25 կմ-ն անցկացվում է «Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից, 16.3 կմ-ը՝ Երեւանի քաղաքապետարանի շինարարության եւ բարեկարգման վարչության ուժերով: Նախատեսված է նաեւ նոր ջրագծերի անցկացում դեպի Աջափնյակ եւ Դավթաշեն»,-նշել է «Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանը:

Գործող ջրագծերի մեծ մասը վթարված է, ջուրը հասցեներ չի հասնում: Ոռոգման նոր համակարգեր են անցկացվում զբոսայգիներում, փողոցների ու ճանապարհների հարակից հատվածներում: Բակերի բարեկարգմանը զուգահեռ՝ ոռոգման ջուրը դրանց կհասնի խողովակներով:

«Բակային տարածքների մոտ 90 տոկոսում ոռոգման համակարգ առհասարակ գոյություն չունի»,-ասել է Բեգոյանը:

Մետաղական հնամաշ ու վթարված խողովակները փոխարինվում են, տեղադրվում է նոր՝ անձրեւացնող համակարգ: Սա խոտածածկ ստեղծելու լավագույն տարբերակն է: Որոշ հատվածներում կլինի նաեւ կաթիլային ոռոգում:

«70 տարվա խողովակներ էին, մշտապես վթարվում էին»,- նշել են ՀՈԱԿ-ի աշխատակիցները:

«Տեղադրվում են նոր պոլիէթիլենային խողովակներ, իսկ այն հատվածներում, որտեղ հատում են փողոցները, դրանք երկաթյա խողովակների միջով ենք անցկացնում, որը երկարեցնում է պոլիէթիլենայինների շահագործման ժամկետը:

Միաժամանակ, վերանորոգվում ու կառուցվում են պոմպակայաններ՝ անխափան ջրամատակարարում ապահովելու նպատակով:

Ոռոգման նոր համակարգերը հնարավորություն կտան վերականգնելու նախկին կանաչապատ տարածքները, նաեւ այդպիսի նոր գոտիներ հիմնելու հնարավորություն են: Քաղաքի կանաչ զանգվածն այս տարի կավելանա շուրջ 20 հա-ով, ինչը կարեւոր է նաեւ քաղաքի բնապահպանական խնդիրները լուծելու տեսակետից:

«Ոռոգման համակարգը կանաչապատման առաջնային պայմանն է: Մենք հենց հիմա էլ կարող ենք հազարավոր ծառեր տնկել Երեւանում, բայց մեզ մոտ այլեւս ոչ մի թուփ չի տնկվում, քանի դեռ լուծված չէ ոռոգման խնդիրը»,-շեշտել է Արմեն Բեգոյանը:

2024 թվականին «Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը մտադիր է ոռոգման համակարգերն ընդլայնել ավելի մեծ ծավալով:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 14 ՃՏՊ. 15 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՆԻՍՏ

ԱԱԾ ՏՆՕՐԵՆՆ ՈՒ ԾՆՈՂՆԵՐԸ

2023թ. հուլիսի 13-ին, ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն, գեներալ-մայոր Ա. Աբազյանի գլխավորությամբ, տեղի է ունեցել Գերիների, պատանդների եւ անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովի հերթական նիստը, որին, բացի հանձնաժողովի անդամներից, ներկա են եղել Հայաստանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պատվիրակության ղեկավար Թիերի Ռիբոն, անհայտ կորած անձանց ընտանիքների շահերը ներկայացնող մի խումբ ծնողներ եւ հարազատներ:

Նիստի ընթացքում հանձնաժողովը հավանություն է տվել Անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց, գերիների վերաբերյալ հայեցակարգին, քննարկվել են անհայտ կորելու հանգամանքների շուրջ տարվող քննության արդյունքները, տուժողների, ինչպես նաեւ ԴՆԹ նույնականացում ունեցող անձանց հետ տարվող աշխատանքները:

Հանձնաժողովի անդամները ներկայացրել են իրենց կատարած աշխատանքները, ինչպես նաեւ պատասխանել ծնողների, հարազատների կողմից բարձրացված հարցերին, որոնք վերաբերել են բռնի անհետացած անձանց ճակատագրին, միջազգային ատյաններում նրանց դեպքերը պատշաճ ներկայացնելու կարեւորությանը, կատարվելիք աշխատանքներին, անհայտ կորելու հանգամանքների շուրջ ՀՀ քննչական կոմիտեի կողմից կատարվող քննությանը, ծնողների ներգրավվածությանը գործընթացին, ԴՆԹ նույնականացում ունեցող անձանց հետ կապված խնդիրներին:

Առանձին հարցեր հանգամանալից քննարկելու նպատակով նիստի ընթացքում ձեռք են բերվել պայմանավորվածություններ հանձնաժողովի առանձին անդամների եւ ծնողների խմբի միջեւ աշխատանքային կարգով հանդիպումներ անցկացնելու վերաբերյալ, որոնց արդյունքները պետք է ներկայացվեն հանձնաժողովին:

ԴԻՄԵՑ

ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ՃԳՆԱԺԱՄՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը նամակներով դիմել է ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի անդամ բոլոր երկրների ղեկավարներին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, ԵԱՀԿ գործող նախագահին, Եվրոպական խորհրդի նախագահին, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության վարչապետին՝ պահանջելով ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում կիրառել հրատապ ու գործուն քայլեր՝ դադարեցնելու Ադրբեջանի կողմից իրականացվող Արցախի ապօրինի ու լիակատար շրջափակումը եւ կասեցնելու Արցախի ժողովրդի դեմ համակարգված կերպով իրագործվող զանգվածային հանցագործությունները եւ ահաբեկչությունը:

Նախագահ Հարությունյանը, ներկայանալով, նախ, որպես Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետության նախագահ, Արցախի իշխանության եւ ժողովրդի անունից այս հրատապ դիմումով ահազանգել է միջազգային հանրությանը Արցախում ձեւավորված ու խորացող անվտանգային ու հումանիտար ճգնաժամի մասին, որն արագորեն վերածվում է աղետի: Հարությունյանի խոսքով՝ այս վիճակը ձեւավորվել է Ադրբեջանի կողմից իրականացված հետեւյալ հանցավոր գործողությունների հետեւանքով.

«2022 թ. դեկտեմբերի 12-ին Արցախը Հայաստանին եւ արտաքին աշխարհին կապող Լաչինի (Քաշաթաղի) միջանցքի՝ Ադրբեջանի կողմից ապօրինի արգելափակման հետեւանքով Արցախի շուրջ 120,000 բնակչությունը հայտնվել է շրջափակման մեջ: Բացի դրանից, Արցախի Հանրապետության շուրջ 30,000 քաղաքացիներ զրկվել են հայրենիք վերադառնալու իրավունքի իրացման հնարավորությունից:

Այդ ժամանակվանից մարդկանց ու բեռների հումանիտար տեղաշարժը Լաչինի միջանցքով տեղի է ունենում բացառապես Կարմիր խաչի միջազգային կոմիտեի եւ ՌԴ խաղաղապահ զորակազմի կողմից՝ խիստ սահմանափակ ծավալով ու որոշակի պարբերական խափանումներով, իսկ Արցախի քաղաքացիների մեքենաների տեղաշարժը լրիվությամբ արգելված է:

2023 թ. հունվարի 9-ից Ադրբեջանը խափանել է Հայաստան-Արցախ բարձրավոլտ միակ գծով էլեկտրամատակարարումը՝ այս 185 օրվա ընթացքում անընդմեջ կերպով հարուցելով Արցախում էներգետիկ ու հումանիտար լրջագույն խնդիրների, էլեկտրամատակարարման ամենօրյա վեցժամյա հովհարային անջատումների, էլեկտրականության սպառման ծավալների 48% նվազման եւ էլեկտրաէներգիայի արտադրության ու մատակարարման տեղական համակարգերի հյուծման: Իսկ, ահա, 2022 թ. դեկտեմբերի 13-ից՝ պարբերաբար, իսկ մարտի 21-ից գրեթե անընդմեջ կերպով Ադրբեջանը խափանել է Հայաստանից Արցախ միակ գազամատակարարումը (հանրագումարային 148 օր շարունակ)՝ դրանով խորացնելով էներգետիկ ու հումանիտար ճգնաժամը:

Հատկապես հունիսի 15-ից բոլոր հումանիտար մատակարարումների կասեցման եւ բացառապես ներքին պաշարների օգտագործման հետեւանքով օրեցօր սրվում է հումանիտար վիճակը:

Առկա է սննդի վատթարացող սղություն, եւ դա՝ այն դեպքում, որ շրջափակումից առաջ օգտագործվող բոլոր պարենատեսակների շուրջ 90 տոկոսը ներկրվում էր Հայաստանից:

Վառելիքի եւ անհրաժեշտ այլ միջոցների խորացող սղության պատճառով չի իրականացվել նախատեսված գյուղատնտեսական աշխատանքների շուրջ 70 տոկոսը, իսկ տնտեսության այլ ճյուղերում՝ ավելին:

Դեղորայքի, բժշկական ու հիգիենայի պարագաների աճող պակասը եւ բուժառուներին Հայաստան տեղափոխելու արգելքը ահագնացող վտանգներ են հարուցում մարդկանց կյանքի ու առողջության հանդեպ:

Էլեկտրամատակարարման ամենօրյա անջատումների ու վառելիքի սղության պայմաններում մեծ դժվարությամբ ու խափանումներով են գործում բժշկական սարքավորումները՝ հանգեցնելով մատուցվող ծառայությունների ծավալների ու որակի լրացուցիչ նվազման:

Անհրաժեշտ մթերքների եւ վիտամինների պակասի պատճառով առաջին հերթին մոտ 2,000 հղիները եւ շուրջ 30,000 երեխաները ստիպված են գոյատեւել թերսնման պայմաններում:

Շրջափակման եւ էլեկտրաէներգիայի ու գազի մատակարարումների խափանման պատճառով շուրջ 12,000 անձ դարձել է գործազուրկ ու զրկվել եկամտի աղբյուրից, ինչը մասնավոր հատվածում փաստացի աշխատող անձանց ավելի քան 60 տոկոսն է:

Նշված եւ բազմաթիվ այլ անվտանգային ու հումանիտար հիմնախնդիրներն ահագնացող սպառնալիքներ են ներկայացնում Արցախի ժողովրդի ֆիզիկական գոյության համար: Առկա իրավիճակը պայթյունավտանգ է եւ հղի շատ կարճ ժամկետում վերածվելու իրական աղետի ոչ միայն Արցախի ժողովրդի, այլեւ ողջ տարածաշրջանի համար:

Նման պայմաններում ցավով արձանագրում ենք, որ Ադրբեջանը հանցավոր դիտավորությամբ չի կատարում եւ շարունակաբար ոտնահարում է 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության դրույթները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2022 թ. դեկտեմբերի 21-ի որոշումը, ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի 2023 թ. փետրվարի 22-ի եւ հուլիսի 6-ի հրամանները, ինչպես նաեւ միջազգային այլ կազմակերպությունների ու բազմաթիվ պետությունների պահանջներն ու հորդորները: Ավելին՝ միջազգային անպատժելիությամբ խրախուսված Ադրբեջանը հետեւողականորեն զարգացրել է իր ագրեսիվ ու հանցավոր գործողությունները»:

ՀԱՆԴԻՊԵԼ Է

ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ԶԻՆԱԿՈՉԻԿՆԵՐԻՆ

ՀՀ զինվորական դատախազ, գլխավոր դատախազի տեղակալ Գրիգոր Էլիզբարյանն այսօր այցելել է ՀՀ պաշտպանության նախարարության հանրապետական կենտրոնական հավաքակայան:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է դատախազության հանրային կապերի բաժնից:

Զինվորական դատախազը ՊՆ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության պետ Արմեն Ավթանդիլյանի ուղեկցությամբ շրջել է հավաքակայանում, ծանոթացել ամառային զորակոչի ընթացքին, իրականացվող աշխատանքներին եւ ծառայության վայրերի վիճակահանությանը:

Հավաքակայանում զինվորական դատախազը հանդիպել է նորակոչիկներին, լսել նրանց հետաքրքրող հարցերը:

Գրիգոր Էլիզբարյանը հետեւել է նաեւ հավաքակայանում ստեղծված բժշկական հանձնաժողովի աշխատանքներին, զրուցել բուժզննում անցնող նորակոչիկների եւ բուժանձնակազմի հետ, լսել հանձնաժողովի անդամների առաջարկները:

Զինվորական դատախազ Էլիզբարյանը հանդիպել է նաեւ ՊՆ հանրապետական կենտրոնական հավաքակայանի անձնակազմի հետ, քննարկել զորակոչին վերաբերող կազմակերպական մի շարք հարցեր:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԹԱՏՐՈՆՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԸ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կարեւոր բարեփոխում որակեց թատրոնների ու համերգասրահների ֆինանսավորման նոր մոդելի ներդրումը: Մեր տեղեկություններով՝ վարչապետը նաեւ պարզաբանեց, թե ինչ է այն իրենից ենթադրում:

«Մոտավորապես, իրավիճակը հետեւյալն է. պետությունը պե՞տք է աջակցի ներկայացումների, նոր ներկայացումների բեմադրության հարցում: Այո՛: Ինչպե՞ս պետք է աջակցի: Ֆինանսապես: Շատ լավ: Ֆինանսապես աջակցում ենք եւ, բնականաբար, հետո ուզում ենք գնանք, տեսնեք՝ ինչ ներկայացում է ստացվել, եւ գնում ենք, տեսնում ենք՝ շատ լավ ներկայացում է ստացվել: Եվ մենք մեր շուրջն ենք նայում, տեսնում ենք՝ բացի Կառավարության ներկայացուցիչներից, էլ մարդ չկա այդ դահլիճում: Բա մեր հանդիսատեսը ո՞ւր է: Դե, հանդիսատես չի եկել: Մի մասը չի հասկանում, մի մասը չի ուզում: Այսպես չի լինի, որովհետեւ Կառավարությունը այդ միջոցը ծախսում է, որ այդ մշակույթը հասանելի լինի մարդկանց:

Որակյալ աշխատանք է արված, բայց մենք չենք ուզում, որ սա դառնա էլիտար ակումբ, որտեղ 1000-հոգանոց դահլիճում 10, 15, 20, 50, 100, 200 հոգի նստում են եւ վայելում են: Մեզ պետք է, որ մշակույթը հասանելի լինի մարդկանց, մարդիկ առնչվեն, որովհետեւ մեր ռազմավարական նպատակը հանրության կրթական մակարդակի շարունակական բարձրացումն է եւ քաղաքացիների միջեւ հարաբերությունների որակի փոփոխությունն է: Երկար ժամանակ է մեզանից պահանջվել եւ պահանջվում, որ մենք թանգարաններին, թատրոններին, մշակութային կազմակերպություններին համոզենք, որ տնտեսավարությունը իրենց անբաժան մասն է: Դրանք կազմակերպություններ ենք, որոնք ֆինանսապես եւ տնտեսապես պետք է լինեն առողջ»,- նշեց նա:

Փաշինյանը նաեւ տեղեկացրեց, որ թատրոնների եւ համերգասրահների կապիտալ ծախսերը, 2017 թվականի համեմատ, աճել են:

«Թատրոնների եւ համերգասրահների կապիտալ ծախսերը 2022-ին, 2017 թվականի համեմատ, աճել են, ուշադրությո՛ւն դարձրեք, 1032 տոկոսով, այսինքն՝ մենք այս խոսակցության մեջ հասկացել ենք, որ թատրոնները, համերգասրահները որոշակի չափանիշների պետք է համապատասխանեն»,- ասաց Փաշինյանը:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՀԱՄԵՐԳԱՍՐԱՀՆԵՐԻ ՆՈՐ ՄՈԴԵԼ

Մշակութային կազմակերպությունները, ստանալով ֆինանսավորում պետական բյուջեից, պետք է հոգ տանեն սեփական եկամուտների ավելացման ուղղությամբ, եւ այս չափանիշով պետք է իրականացվի մշակութային կազմակերպությունների կառավարման որակի գնահատումը: Կառավարության հերթական նիստի ժամանակ այս մասին ասաց Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը՝ ներկայացնելով թատերահամերգային կազմակերպությունների ֆինանսավորման փորձնական մոդելի ներդրման ծրագիրը:

«Թատերական ներկայացումներից ստացված հասույթը 2021 թվականին կազմել է 773,9 միլիոն դրամ, միջին հաշվով 1 ներկայացման մուտքի վճարումներից հասույթ է եղել 264 հազար դրամի չափով:

Այս ընթացքում Կառավարությունը էական ներդրումներ է արել թատրոնների եւ համերգասրահների ենթակառուցվածքների բարելավման համար: Նախորդ տարի հատկացվել էին ռեկորդային միջոցներ՝ 1 միլիարդ 284 միլիոն դրամի չափով, եւ այս իրավիճակում ունենք այն հանգամանքը, որ մշակութային հաստատությունների պայմանների բարելավումը բարձրացրել է նաեւ հանրությանը մատուցվող ծառայությունների որակը, կազմակերպության սեփական եկամուտների ծավալը, եւ հաստատությունների 90 տոկոսը գրանցել է սեփական եկամուտների աճ՝ 2019 թվականի համեմատ»,- ընդգծեց նախարարը:

Անդրեասյանի խոսքով՝ մշակութային հաստատությունների սեփական եկամուտների աճը խթանելու նպատակով ԿԳՄՍՆ-ն մշակել եւ առաջարկում է ներդնել թատրոնների ու համերգասրահների ֆինանսավորման նոր մոդել:

«Ֆինանսավորման փորձնական մոդելի շրջանակներում յուրաքանչյուր տարի թատերահամերգային կազմակերպությանը կտրամադրվի իր կողմից կանխատեսվող սեփական եկամուտների կրկնապատիկի չափով գումար: Այդ գումարը կարող է օգտագործվել պահպանման ծախսերի, աշխատակիցների վարձատրության բարձացման, նոր, վերափոխված ներկայացումների բեմադրության, հյուրախաղերի անհրաժեշտ կապիտալ ծախսերի համար»,- ասաց նախարարը:

Անդրեասյանը հայտնեց, որ այս տարի ֆինանսավորման փորձնական մոդելը կներդրվի Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԵՍԻՆ՝ «ԻՆՏԵՐ ՄԱՅԱՄԻ»-ՈՒՄ

Աշխարհի չեմպիոն Արգենտինայի հավաքականի 36-ամյա հարձակվող Լիոնել Մեսին ներկա է եղել ամերիկյան «Ինտեր Մայամի»-ի մարզմանը, հանդիպել է նոր թիմակիցների հետ եւ բուժզննում է անցել. հաղորդում է ESPN-ը:

«Ոսկե գնդակի» 7-ակի դափնեկրի շնորհանդեսը ՄԼՍ-ը ներկայացնող ակումբում սպասվում է հուլիսի 16-ին, իսկ նորամուտը՝ հուլիսի 21-ին մեքսիկական «Կրուս Ասուլի» դեմ խաղում:

Նախորդ օրը Մեսիին նկատել էին Մայամիի սուպերմարկետներից մեկում գնումներ կատարելիս:

Հիշեցնենք, որ նախորդ երկու մրցաշրջանը Մեսին անցկացրել է փարիզյան ՊՍԺ-ում՝ 75 խաղում խփելով 32 գոլ, կատարելով 35 գոլային փոխանցում, դառնալով Ֆրանսիայի կրկնակի չեմպիոն եւ սուպերգավաթակիր:

«Բարսելոնայի» կազմում Մեսին դարձել է Իսպանիայի 10-ակի չեմպիոն, 7-ակի գավաթակիր, Չեմպիոնների լիգայի քառակի գավաթակիր, Եվրոպայի եռակի սուպերգավաթակիր:

ՄԱՐԶՈՒՄՆԵՐԸ ՎԵՐՍԿՍՈՒՄ ԵՆ

Իտալական Միլան քաղաքի «Ինտեր» ակումբը մեկամսյա հանգստից հետո վերսկսել է մարզումները:

Այս մասին հայտնում է ակումբի մամուլի ծառայությունը:

«Ինտեր»-ի հիմնական կազմի ֆուտբոլիստներն առաջին մարզումն են անցկացրել, որին մասնակցել է նաեւ Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին ավագ հեներիխ Մխիթարյանը:

Ֆուտբոլի Իտալիայի 2023/24 մրցաշրջանը կմեկնարկի օգոստոսի 19-ին: «Ինտեր»-ն առաջին տուրի խաղում կմրցի «Մոնցա»-ի հետ: Խաղը կկայանա օգոստոսի 19-ին եւ կմեկնարկի Երեւանի ժամանակով 22:45-ին:

ՊԼԱՆՆ ԱՇԽԱՏԵՑ

Երեւանի «Փյունիկ»-ի գլխավոր մարզիչ Եղիշե Մելիքյանի կարծիքով՝ Կոնֆերենսիաների լիգայի առաջին փուլի անդրանիկ խաղում իր թիմին հաջողվեց կյանքի կոչել մտածված պլանը:

«Հաճելի էր եվրոպական մրցաշարում առաջին խաղը հաղթանակով ավարտել: Մեր պլանը, որը մենք պատրաստել էինք այս խաղի համար, աշխատեց: Դեպի դարպասը 26 հարված ենք կատարել եւ միայն երկու գնդակ խփել. սա չի բավարարում: Բայց արդարացումն այն է, որ պաշտոնական առաջին խաղն է: Խաղը զգալով՝ մենք կարող ենք այդ հարցերին էլ լուծում տալ»,- հետխաղյա մամուլի ասուլիս ժամանակ ասաց Մելիքյանը:

Մասնագետի խոսքով՝ «Փյունիկ»-ին հաջողվել է լուծել գրոհների հետ կապված խնդիրը, եւ թիմի ֆուտբոլիստների մոտ ստացվում էր թիմային համագործակցությունը:

«Մեզ հեշտ հանդիպում չի սպասվում արտագնա խաղում: Չենք հանգստանում, այլ առավել հավաքված պետք է գործենք: Այս հաղթանակը պետք է մոռանանք ու պատրաստվենք հաջորդ խաղին»,-ասաց նա:

● Հունիսի 14-ին Երեւանի Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Տիկնայք եւ պարոնայք» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Հաճախ ենք լսում քաղաքացիական պաշտպանության ծառայությունների եւ կազմավորումների մասին. ինչե՞ր են դրանք:

Մուշեղ Առաքելյան (19 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացիական պաշտպանության ծառայությունները ստեղծվում են պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաեւ պաշտպանական, տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող, քաղաքացիական պաշտպանության տեսանկյունից բարձր վտանգավորություն ներկայացնող կազմակերպություններում, որոնք նախատեսված են քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով ոլորտային (բժշկական, էներգետիկայի, տրանսպորտային, կոմունալ-տեխնիկական եւ այլն) խնդիրների լուծման համար:

Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ընդհանուր խնդիրներն են՝

- քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման պլանավորումը եւ իրականացումը քաղաքացիական պաշտպանության համակարգի ռազմական դրության ժամանակ գործելու դեպքում,
- քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կազմավորումների ստեղծումը, դրանց ապահովումն անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով, պատրաստումը եւ մշտական պատրաստականության վիճակում պահպանումը,
- ստեղծված իրադրության մասին ոլորտային տեղեկատվության ստացման, վերլուծման եւ գնահատման կազմակերպումն ու քաղաքացիական պաշտպանության համապատասխան պետին փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու համար:

ՀՀ ԱԻՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Խոցման օջախներում փրկարարական եւ վթարավերականգնողական աշխատանքների կատարման համար համայնքներում, կազմակերպություններում ստեղծվում են ինժեներական, վթարատեխնիկական, գյուղատնտեսական կենդանիների պաշտպանության, հետախուզական եւ քաղաքացիական պաշտպանության այլ կազմավորումներ: Դրանց անհրաժեշտ տեսակները, թիվը, կազմակերպական կառուցվածքը եւ հագեցվածության նորմերը մշակում ու հաստատում են կազմավորումներ ստեղծող քաղաքացիական պաշտպանության պետերը (համայնքների ու կազմակերպությունների ղեկավարները):

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Եթե երեխայի ավագ եղբայրը կամ քույրը հաճախում են տվյալ դպրոց, ապա նրան որեւէ արտոնություն տրվո՞ւմ է:

Մովսես Երիցյան (40 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի համաձայն՝ ցանկացած ծնող իրավունք ունի երեխայի ուսուցման համար ընտրելու ուսումնական հաստատությունը եւ կրթության ձեւը: Հետեւաբար, որեւէ չափանիշ, ներառյալ բնակավայրին կամ աշխատանքի վայրին մոտ գտնվելու կամ տվյալ դպրոց հաճախող քույր կամ եղբայր ունենալու փաստը, չի կարող որեւէ երեխայի գրանցման համար առաջնահերթություն ապահովել:

ՀՀ ԿԳՄՍՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե ցանկանում եք, որ Ձեր երեխան սովորի հենց Ձեր նախընտրած դպրոցում, ապա հարկավոր է հնարավորինս շուտ գրանցվել առցանց համակարգի միջոցով, քանի դեռ տվյալ դպրոցի համար սահմանված տեղերը չեն սպառվել:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեւանում կայացած Կոնֆերենցիաների Լիգայի առաջին փուլում «Ալաշկերտ»-ն ընդունել է «Արսենալ Տիվատ»-ին (Մոնտենեգրո) ու 1:1 հաշիվը գրանցել:

«Արսենալ Տիվատ»-ի կազմում 23-րդ րոպեին գոլի հեղինակ է դարձել Խուլիան Մոնտենեգրոն, «Ալաշկերտ»-ին հաջողվել է պատասխան գնդակը խփել 23 րոպե անց. աչքի է ընկել Վիտալի Ուստինովը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+6 + 11 +25 + 28
Կոտայքի լեռներ	+ 5 +10 +24 + 26
Կոտայքի նախալեռներ	+15 + 18 +30 + 32
Գեղարքունիք	+6 + 11 +20 + 24
Լոռի	+7 + 12 +22 + 26
Տավուշ	+12 + 16 +26 + 30
Արագածոտնի լեռներ	+ 5 + 10 +23 + 25
Արագածոտնի նախալեռներ	+16 + 19 +29 + 33

Արարատ	+17 + 19 +33 + 35
Արմավիր	+14 + 17 +32 + 34
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 11 +22 + 24
Վայոց ձորի նախալեռներ	+16 + 20 +33 + 36
Սյունիքի հովիտներ	+20 + 23 +30 + 33
Սյունիքի նախալեռներ	+12 + 13 +23 + 27
ԼՂՀ	+16 + 19 +28 + 33
Երեւան	+15 + 17 +32 + 34

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **13.7.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, վ. Հանքարծոնյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*